Արձանագրություն N 3

«89ԴՊ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սեբաստիա 19 **«26» «06» 2019թ**

Ժ.14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Այվազյանը,

Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Մխիթարյանը, Կ. Գևորգյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(***Ա. Այվազյան***)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին, 19.06.2019թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:
- 21.06.2019թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 25.06.2019թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			**Մասնակցի հայտի գնահատման արդյունքները**
			Մասնակցի անվանումը
			«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	«Մասնագիտական փորձառության» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
3	«Ֆինանսական միջոցներ» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(***Ա. Այվազյան***)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

Ընտրված մասնակից ճանաչել՝

- 1-ին չափաբաժնի մասով «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին,

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա.Այվազյան
Անդամներ՝		Կ.Գևորգյան
		Թ.Մխիթարյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան